ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 սեպտեմբերի 2015թ. թիվ 259-Ա

Հ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետը և հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի Վ.Թեքեյանի անվան N 6 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի խորհրդի նախագահի 10.09.2015թ. գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հմայակ Վոլոդյայի Մարտիրոսյանին նշանակել «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի Վ.Թեքեյանի անվան N 6 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով 2015 թվականի սեպտեմբերի 15-ից:

2. Հ.Մարտիրոսյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2015թ. սեպտեմբերի 15
ք.Վանաձոր